

ՋԵԿՈՒՑԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ  
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՈՒ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
2014թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՄՈՒՍԱԼԵՈՒ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ

Համայնքի վարչական տարածքը 646.9 հա է: Տնտեսությունների քանակը կազմում է 768: Բնակչության թիվը՝ 2967 է/1412 տղամարդ, 1555 կին/, որից երկարատև բացակայողների թիվը կազմում է 340, որից տղամարդ 184, կին 156, ժամանակավոր բացակայողների թիվը 52, որից տղամարդ 41, կին 11: Համայնքում ծնվել է 36 երեխա, մահացել է 19 մարդ:

Մուսալեռի գյուղապետարանը իր աշխատանքային գործունեությունը կազմակերպել է ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի պահանջներով: Ըստ բնագավառների իրականացվել են հետևյալ աշխատանքները

**Քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում**

կատարել է քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է առել քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները և ձևափոխել է համապատասխան միջոցներ:

Միջոցներ է ձևափոխել պաշտպանելու համայնքի բնակիչների ու տնտեսվարող սուբյեկտների իրավունքները և օրինական շահերը:

Անձնագրային բաժնում, կադատի վաղարշապատի տարածքային ստորաբաժանումում բազմիցս հանդես է եկել համայնքի բնակիչների օրինական շահերը պաշտպանելու նպատակով:

Հրավիրել և վարել է Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու թիվ 11 նիստ: Արձակել է 42 կարգադրություն, ընդունել է 51 որոշում: Տրվել է 1266 տեղեկանք:

## Ֆինանսների բնագավառում

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի կողմից ներկայացված հաստատված բյուջեների համաձայն՝ 2014թ.-ի տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 7592.1 հազար դրամ, եկամուտներ է նախատեսվել 52961.1 հազար դրամ, որից վարչական բյուջեով 49949.3 հազար դրամ, իսկ ֆոնդային բյուջեով 3011.8 հազար դրամ:

Համաձայն ներկայացված հաշվետվությունների վարչական բյուջեն եկամուտների մասով կատարվել է 96.3 % կամ պլանով նախատեսված 49949.3 հազար դրամի դիմաց կատարվել է 48099.9 հազար դրամ, այդ թվում սեփական եկամուտների զծով 17932.0 հազար դրամի դիմաց կատարվել է 16082.6 հազ.դրամ, իսկ Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի զծով 31918.9 հազար դրամ և այլ աղբյուրներից տրանսֆերտներ 98.4 հազար դրամ:

### Սեփական եկամուտներ՝

Հողի հարկից եկամուտ է նախատեսվել 5900.0 հազար դրամ, փաստացի գանձվել է 5473.1 հազար դրամ (92.8%):

Գույքահարկի զծով նախատեսվել է 8800.0 հազար դրամ, փաստացի գանձվել է 9500.8 հազար դրամ ( 108.0%):

Ընդամենը տեղական տուրքեր է նախատեսվել 459.5 հազար դրամ փաստացի գանձվել է 461.5 հազար դրամ ( 100.4%):

Ոչ հարկային եկամուտներ, համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ է նախատեսվել 763.5 հազար դրամ, փաստացի գանձվել է 178.7 հազար դրամ ( 23.4%): Տեղական վճարներ է նախատեսվել 2009.0 հազար դրամ փաստացի գանձվել է 468.5 հազ.դրամ ( 23.3%):

Համայնքի սեփականություն համարվող հիմնական միջոցների օտարումից մուտքեր են նախատեսվել 3011.8 հազար դրամ փաստացի գանձվել է 3011.8 հազար դրամ :

Տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 7292.1 հազ. դրամ:

### Ծախսեր

Մուսալեռի գյուղապետարանի 2014թ. բյուջեով ծախս է նախատեսվել

վարչական մասով 49949.3 հազար դրամ փաստացի ծախսվել է 44924.0 հազ.դրամ ,իսկ ֆոնդային մասով նախատեսվել է 10603.9 հազար դրամ փաստացի ծախսվել 8233.7 հազար դրամ:

Վարչական բյուջեով աշխատավարձի և հավելավճարների հողվածներով ծախս է նախատեսվել 20517.4 հազար դրամ, փաստացի ծախսվել է 19743.8 հազար դրամ (96.2 %):

Սոցիալական նպաստներ / սոց. օգնություն / է նախատեսվել 4265.0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 4255.0 հազար դրամ (99.8%):

Այլ մշակութային միջոցառումների համար նախատեսվել է 300.0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 89.5 հազար դրամ (29.8%):

Համայնքի աղբահանման, կոմունալ ծառայության ծախսեր է նախատեսվել 2600.0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 2600.0 հազար դրամ (100%):

Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման և այլ ծախսերի համար ծախս է նախատեսվել 19371.5 հազար դրամ , փաստացի ծախսվել է 17540.3 հազար դրամ (90.5%):

Սուբսիդիաներ ոչ ֆինանսական համայնքային կազմակերպություններին ծախս է նախատեսվել 695.4 հազ.դրամ փաստացի ծախսվել է 695.4 հազ.դրամ (100%):

Պահուստային ֆոնդ է նախատեսվել 2200.0 հազ.դրամ:

Ֆոնդային բյուջեով նախատեսվել է 10603.9 հազար դրամ, փաստացի ծախսվել է 8233.7 հազար դրամ (77.6%):

Շենքերի և շինությունների կառուցում հողվածով նախատեսվել է 3550.0 հազար դրամ փաստացի ծախսվել է 1975.8 հազար դրամ (55.7%):

Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում հողվածով նախատեսվել է 3433.9 հազար դրամ, փաստացի ծախսվել է 3083.1 հազար դրամ (89.8%):

Վարչական սարքավորումների ձեռք բերման ծախսեր է նախատեսվել 1690.0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 1594.8 հազար դրամ (94.4%):

Տրանսպորտային միջոցների ձեռքբերման ծախսեր է նախատեսվել 590.0 հազար դրամ փաստացի ծախսվել է 590.0 հազար դրամ (100.0%):

Նախագծահետազոտական ծախսեր է նախատեսվել 350,0 հազար դրամ:

Այլ ակտիվների ձեռք բերման ծախս է նախատեսվել 990.0 հազար դրամ փաստացի ծախսվել է 990.0 հազար դրամ (100.0%):

- Մաշտոց փողոցում կառուցվել է աղբատեղի,
- Գինեվետ փողոցում կատարվել է դիտահորի կառուցում,
- Մ. Սարգսյան փողոցի արտաքին լուսավորության համակարգի կապիտալ վերանորոգում,
- Երևանյան I փողոցից Բաղրամյան փողոց տանող ճանապարհի աստիճանների վերանորոգում,
- Համայնքի գիշերային լուսավորության համակարգի վերանորոգում,
- Երևանյան I փողոցի գիշերային լուսավորության համակարգի անցկացում,
- Աթաբեկյան թաղամասի, Մայաթ-Նովա, Վ. Մամիկոնյան, Կոմիտաս, Չարենց, Գինեվետ, Արցախ, Նարեկաց, Գ. Լուսավորիչ, Մ. Սարգսյան փողոցների ճանապարհների հարդարման աշխատանքների իրականացում:
- Գինեվետ փողոցում ոռոգման ջրի խողովակի վերանորոգում:

#### *Հողօգտագործման բնագավառում*

Անմիջական վերահսկողություն է իրականացրել համայնքի հողային ֆոնդի նպատակային օգտագործման համար:

Իրականացվել է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի հաշվառումը և կազմվել է հողային հաշվեկշիռը:

#### *Առևտրի և սպասարկման բնագավառում*

Մշակել է առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները, դրանք ներկայացնել համայնքի ավագանու հաստատմանը և վերահսկել դրանց կատարումը:

Համայնքի ղեկավարի կողմից տրվել է ոգնից խմիչքների, ծխախոտի, վառելիքաքաղցրահամային նյութերի վաճառքի թույլտվություն, բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվություն:

Հսկողություն է իրականացվել հանրային, կենցաղային ծառայությունների ոլորտում:

Թվով 132 բնակչի տրվել է դրամական օգնություն, որից 2014թվականի ընթացքում ծնված յուրաքանչյուր երեխայի (33 երեխա) ծնողի տրվել է 30 000դրամ և մեկ հուշագիրք, մահացած բնակչի հարազատին (20 բնակիչ) 40000դրամ, զորացրվածներին (15 բնակիչ) 20 000դրամ և ֆինանսապես անապահով բնակիչներին՝ տարբեր դրամաչափով:

Թվով 2 անվճարունակ հարկատուները օգտվել են շինությունների և փոխադրամիջոցների գույրահարկի արտոնություններից:

Գյուղապետարանը աշխատավարձի գծով պարտքեր չունի:

### *Պաշտպանության բնագավառում*

Աջակցել է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը: Աջակցել է զորակոչի, զորահավաքների իրականացման աշխատանքներին:

Լրացվում է Մուսալեռի գյուղական համայնքի զինապարտ քաղաքացիների հաշվառման գրանցամատյանը:

2014 թվականի ընթացքում զորացրվել է թվով 20 զինվոր: Զինձառայությունից ազատվածներին՝ յուրաքանչյուրին տվել է դրամական պարգև և շնորհակալագիր:

Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցներին, զոհված ազատամարտիկների ընտանիքներին և Ղարաբաղյան պատերազմի մասնակիցներին տրվել է դրամական օգնություն: Մայիսի 9-ի Հաղթանակի օրվա կապակցությամբ ծաղիկներ և ծաղկեպսակ է դրվել զոհված ազատամարտիկների շիրիմներին:

Կատարվել է զոհված ազատամարտիկների գերեզմանների տարածքի կապիտալ վերանորոգում:

### *Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում*

Սահմանված կարգով տրվել է համայնքի վարչական սահմաններում իրականանացվող թվով 2 բնակելի տան և 3 այլ տեսակի շինության շինարարության թույլտվություն:

Կատարվել է

- Անի թաղամասի կոյուղագծի մաքրման աշխատանքներ,

*Առողջապահության,*

*Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում*

Նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը: Պարբերաբար տարվում են Ֆուտբոլի խաղահրապարակի մաքրման և պահպանման աշխատանքներ:

Հունա-հոռմեական ըմբշամարտի պատանիների ՀՀ առաջնությունում 54կգ քաշային կարգում առաջին տեղը զբավելու համար համայնքի բնակիչ Էդգար Թամազյանին տրվել է դրամական պարգև 50 000դրամ:

Հունա-հոռմեական ըմբշամարտի պատանիների ՀՀ առաջնությունում 50կգ քաշային կարգում առաջին տեղը զբավելու համար համայնքի բնակիչ Մուրադ Հարությունյանին տրվել է դրամական պարգև 50 000դրամ:

*Կրթության, մշակույթի և*

*նրիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում*

Ֆր. Վերֆելի անվան միջնակարգ դպրոցի ուսուցչական կազմի, <Մուսալեռի բժշկական ամբուլատորիա> ՓԲԸ-ի աշխատողների և գյուղապետարանի աշխատակիցների համար ձեռք է բերվել Հակոբ Պարոնյանի թատրոնի ներկայացման տոմսեր:

Առաջին դասարանցիներին տրվել է դպրոցական պայուսակ և գրենական պիտույքներ:

Կատարվել է զբոսայգու խաղային գույքի, խափանված լույսերի, լուսատու լամպերի վերանորոգում: Կատարվել է զբոսայգու նստարանների, մանկապարտեզի ցանկապատի, տաղավարների ներկման աշխատանքներ: Վերանորոգվել է սպորտային հրապարակի ոռոգման համակարգը:

Կատարվել է մանկապարտեզի հատակի վերանորոգում: Ձեռք է բերվել սննդի, սպասքի և խաղալիքների պահարան:

Մասնակցություն է ունեցել Լոս-Անջելես քաղաքում կայացած հեռուստամարաթոնին՝ տալով դրամական աջակցություն:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական  
Համայնքի ղեկավարի հաշվետու ժողովի

2015 թվականի հունվարի 21-ին ժամը 14-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղապետարանում տեղի ունեցավ համայնքի ղեկավարի հաշվետու ժողով:

Ժողովին ներկա էին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանման բաժնի պետ՝ Ն. Պետրոսյանը, համայնքի ավագանու անդամները, գյուղապետարանի, մանկապարտեզի աշխատակիցները և համայնքի բնակիչներ:

Համայնքի բնակիչները համայնքի ղեկավարին հղեցին իրենց հուզող հարցերը:

Բնակիչները ցանկանում են, որպեսզի համայնքում զարգանա փոքր և միջին բիզնեսը, որը կնպաստի աշխատատեղի առաջացմանը: Համայնքի բոլոր փողոցները ու ճանապարհները լինեն բարեկարգ, ապահովված լինեն գիշերային լուսավորությամբ, բոլոր բնակարանները լինեն գազաֆիկացված: Հիմնովին վերանորոգվի համայնքի սպորտդահլիճը և կառուցվի կամ վերակառուցվի գյուղի մշակույթի տունը: Միջհամայնքային ճանապարհներին տեղադրվի երթևեկության նշաններ, ինչի շնորհիվ կկանխվի անկանոն երթևեկությունը:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց 2014 թվականի ընթացքում կատարված աշխատանքերը, խոսեց հետագա ծրագրերի մասին, պատասխանեց համայնքի բնակիչների հուզող հարցերին:

Նա հայտնեց, որ գյուղապետարանի համար նույնպես առաջնահերթ են համարվում այն աշխատանքների իրագործումը, ինչպիսիք են փողոցներ և ճանապարհների բարեկարգումը, մշակույթի տան շենքի կառուցումը:

Կրթելավվի համայնքի ֆինանսական վիճակը՝ եկամուտների հավաքագրման մակարդակը բարձրացնելով: Կապահովվի համայնքի բնակիչների սոցիալական պաշտպանվածությունը:

Հնարավորինս կնպաստի գյուղատնտեսության և անասնապահության զարգացմանը: Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանն ուղղված միջոցառումներ կկիրառվեն:

Աշխատակազմի քարտուղար  
Գ. Մուսալեռ  
21.01.2015



Գ. Մարտիրոսյան

*Գյուղատնտեսության և բնապահպանության բնագավառում*

Նպաստել է ինքնակամ հողագավթման կանխմանը:

Արմավիրի մարզպետարանի կողմից տրամադրված սերմացուները հատկացվել է հողօգտագործողներին:

Կազմակերպվել է համատարած գյուղատնտեսական հաշվառում: Կատարվել է ընտանի կենդանիների հաշվառում:

Մուսայեռ համայնքի ղեկավար  
21.01.2015թ.



Է. Նովիաննիսյան